ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2018 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ <<ԷԱՃԱՊՁԲ-2019/4-4-ԵՊԲՀ>>

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի կարիքների համար **դեղորայքի, քիմիական նյութերի** ձեռքբերման նպատակով կազմակերպված **<<ԷԱՃԱՊՁԲ-2019/4-4-ԵՊԲՀ>>** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ **2018 թվականի նոյեմբերի 23-ին** ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ **2018 թվականի նոյեմբերի 26-ին** տրամադրված պարզաբանումները:

Հարցադրում: Խնդրում ենք տալ պարզաբանում հետևյալ հարցին՝ Ձեր հրավերի թիվ 1 չափաբաժնի տեխ. բնութագրում նշված է՝ Սևոֆլուրան sevofluran հեղուկ շնչառման 100%-250մլ Quik fil տեսակի կամ համարժեք փակող համակարգով, պլաստիկե տարա, մինչդեռ մեր Սևոֆլուրանը ապակե տարաներով է և համաձայն ՀՀ կառավարության 2013թ. մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշման 3-րդ մասի 1-ին կետի, պետք է բացառվի որևէ գրանցված տարբերակի մրցույթին չմասնակցելու հավանականությունը: Եթե մենք ներկայացնենք մեր Սևոֆլուրանը արդյոք դա կհամարվի համարժեք, թե ոչ:

Պարզաբանում: Հարգելի Մասնակից, ի պատասխան Ձեր կողմից ուղարկված 23.11.2018թ. <<ԷԱՃԱՊՁԲ-2019/4-4-ԵՊԲՀ>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ուղղված հարցման, տեղեկացնում ենք Ձեզ, որ եթե Ձեր կողմից առաջարկվող դեղորայքի ազդող նյութը (ակտիվ բաղադրատարրը), դեղաձևը, դեղաչափը նույնն են, իսկ թողարկման ձևը ևս նույնն է՝ տարա, ապա չկա որևէ տարբերություն պլաստիկե կամ ապակե տարաների միջև և գնահատման ժամանակ այն միանշանակ կգնահատվի որպես համարժեք:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **<<ԷԱՃԱՊՁԲ-2019/4-4-ԵՊԲՀ>>** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար **Պ. Գաբրելյանին:**

Հեռախոս՝ **011-62-10-50:**

Էլեկտրոնային փոստ՝ **marketing.ysmu10@gmail.com**:

<<ԷԱՃԱՊՁԲ-2019/4-4-ԵՊԲՀ>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

_____ **Ա. Հակոբյան**
(ստորագրությունը)

_____ **Հ. Սարգսյան**
(ստորագրությունը)

_____ **Մ. Գրիգորյան**
(ստորագրությունը)

_____ **Պ. Գաբրելյան**
(ստորագրությունը)